

DIGGING FOR GOLD, LEAVING DROSS

Posted on September 8, 2014 by Keghart



Category: [Opinions](#)



Why Are Foreign Mining Companies Drawn to Armenia?

Հայերէն թարգմանութեան համար խփել

[Ինչո՞ւ են այդքան հրապուրիչ
Հայաստանի ընդերքի պաշարները](#)

Pan-Armenian Environmental Front, 3 September 2014

[Canada's Dundee Precious Metals Co.](#) and the [Canada-Armenia Business Council](#) have sponsored a forum in Toronto (Sept. 7) to discuss mining in Armenia, and the role of Canadian mining companies. The gathering's main goal is to discuss the prospects of developing the mining sector in Armenia and attracting investors to the fatherland, according to Hrach Jabrayan, general director of Dundee.

The natural resources of Armenia are viewed by foreign mining companies as a source for easy profits. Armenia, lacking in developed institutions and mired in corruption, is vulnerable to the blandishments of foreign companies. The global mining "machine" is exploiting the resources of similar developing countries by framing its intentions with rosy words (promising accountability and international standards) while they pay meager taxes and duties and then leave the country with a heritage of mortally damaged environment and poor health for its residents. This state of affairs would be impossible without the support of high-ranking officials who expedite the embezzlement of natural resources so as to get their "cut".

Why Are Foreign Mining Companies Drawn to Armenia?

Հայերէն թարգմանութեան համար խփել

[Ինչո՞ւ են այդքան հրապուրիչ
Հայաստանի ընդերքի պաշարները](#)

Pan-Armenian Environmental Front, 3 September 2014

[Canada's Dundee Precious Metals Co.](#) and the [Canada-Armenia Business Council](#) have sponsored a forum in Toronto (Sept. 7) to discuss mining in Armenia, and the role of Canadian mining companies. The gathering's main goal is to discuss the prospects of developing the mining sector in Armenia and attracting investors to the fatherland, according to Hrach Jabrayan, general director of Dundee.

The natural resources of Armenia are viewed by foreign mining companies as a source for easy profits. Armenia, lacking in developed institutions and mired in corruption, is vulnerable to the blandishments of foreign companies. The global mining "machine" is exploiting the resources of similar developing countries by framing its intentions with rosy words (promising accountability and international standards) while they pay meager taxes and duties and then leave the country with a

heritage of mortally damaged environment and poor health for its residents. This state of affairs would be impossible without the support of high-ranking officials who expedite the embezzlement of natural resources so as to get their "cut".

The Toronto forum is reminiscent of the international conference held in Yerevan (March 25-26, 2014) where international banks and financial institutions, diplomats, local and international experts and mining companies discussed the future of mining in Armenia. The participation of the Armenian government was limited. Government representatives were mid-level officials, and some left shortly after the opening of the proceedings. Dundee Precious Metals is now organizing a similar event in Canada. The Toronto gathering will be attended by the senior management and shareholders of the company, Canadian businesses, representatives of the Armenian community, Canada's minister of labor, the Armenian ambassador to Canada, Syunik region's governor Vahe Hakobyan, and Armenian religious leaders.

Dundee Precious Metal's Kapan company (formerly Dino Gold Mining) is at present exploiting the Shahumyan gold mine in Syunik. It is worth mentioning that the forum is being co-sponsored by a company which is well-known in Armenia by its operations. In a "hetq.am" [interview](#) on May 13 the Armenian Environmental Front (AEF) disclosed that Dundee was in conflict with its avowed corporate social responsibility values of not harming the environment, human health, as well as respect for people's labor and human values. The allegations of employee rights violations were later confirmed by [Sedrak Asatryan](#), the lawyer representing Dundee. Despite these revelations, the company proceeded with its wrong-headed policies, simply changing its cloak from Dino Gold Mining to Dundee Precious Metals.

We would like to remind the Canadian-Armenian Business Council, the Syunik governor and the decision-makers in the Armenian government that tiny Armenia (29,700 km) has granted mining companies an incredible 460 permits, 26 which are for operating metal mines and 71 metal mines under exploration. As a result, there are now 25 filled and conserved tailing ponds. If the mining industry continues at its present pace, in 20 to 30 years there will be hundreds of extremely hazardous tailing dumps which will pose a serious health hazard to the people of Armenia.

There are thousands of Armenia mining sites that have been abandoned after being dug out. These vast, ugly and dangerous holes are full of discarded heavy metals and other hazardous materials. For short-term profits many mining companies are destroying ecological systems, including Armenia's woods. The centuries-old Teghut forest is one such example. Surface and ground water streams have been poisoned by waste streams from tailing ponds. The water, which absorbs these hazardous materials, is used for agricultural purposes, thus channeling the hazardous materials into the food people eat. There is credible scientific evidence which proves this. About 90% of such offending mines are in Syunik, a regions which covers 4,506 sq. km.

Mining in Armenia is a very lucrative business. The so-called government has not only given 100%

rights of exploration to offshore companies but has also enacted legislation which makes mining a breeze. For example, to extract the natural environmental patrimony of the Armenian people, the government has levied taxes that are almost at the same rate as those of other business sectors. It's almost a universal rule that tax rates for mining should be significantly higher.

In Armenia mining companies are also free of fees for maintaining tailing dumps, waste and extraction piles. If these were taxed even at the lowest rates (in Estonia the tax for one ton is 1.06 euros), the government would collect hundreds of millions of dollars every year. In fact, the sum would be higher than all the taxes and fees currently paid by mining companies in Armenia.

Current legislation call for such low taxes and fees for polluting the environment that it is more beneficial for the mining companies to pay the fees than invest in technologies which would keep the environment clean. As there is almost no supervision and control, the mining companies do not respect environment protection rules and ignore the conditions of their permits.

Does anyone know where the ores extracted in Armenia go? Armenia does not have a single plant that processes ores or produces the final product. It seems greed for fast money has made the Armenian government blind. Foreign companies are exploiting the opportunity since buying mining rights is cheap and easy. The statements about new jobs in mining are not helpful: according to official statistics, the mining sector in Armenia employed 15,500 in 2011 (1% of the total labor force) while the contribution of the mining sector to Armenia's GDP was 3% only. Would the Canadian government and people allow the operation of mines under such conditions in Canada?

The fact is we do not have a government system that would protect the interests of Armenia. The government is corrupt and public administration has become a business. The heart of the problem is the government system. As long as Armenia's legislation is not improved (better mining and environmental legislation, tax, fees), as far as there is no long-term planning and strategy for the mining sector with proper evaluation of income and environmental harm, as far as the money derived from the mining industry does not serve the interests of the country, we, as Armenians, will do our best to stop this destructive process, and condemn similar forums and discussions by mining companies. They're intended to expedite the faster embezzlement of the natural wealth of Armenia.

Below two videos identify the mining companies and how they operate in Armenia. The videos also show environmental and health hazards as a result of the operation of such mines.

["Armenia's Breaking Backbone"](#) documentary movie

["Mining is a Threat to Syunik"](#) by AR TV company

Armenian Environmental Front (AEF)

URL: <http://www.armecofront.net/>

Facebook: <https://www.facebook.com/armecofront>

YouTube: <http://www.youtube.com/user/armecofront>

Ինչո՞ւ են այդքան հրապուրիչ Հայաստանի ընդերքի պաշարները

Համահայկական Բնապահպանական Ճակատ, 3 Սեպտեմբեր, 2014

Հայաստանի ընդերքի պաշարների նկատմամբ հանքարդյունաբերական ընկերությունների հետաքրքրությունը չի մարում: 2014 թվականի սեպտեմբերի 7-ին Կանադայի Տորոնտո քաղաքում [Դանդի Փրեշս Մեթալս](#) ընկերությունը, [Կանադա-Հայաստան Գործարարների Խորհրդի](#) հետ համատեղ կազմակերպում է ֆորում «Հանքարդյունաբերությունը Հայաստանում և կանադական հանքարդյունաբերական ընկերությունների դերը» խորագրով: «Դանդի Փրիշս Մեթալս Կապան» ընկերության գլխավոր տնօրեն Հրաչ Ջաբրայանի խոսքերով՝ համաժողովի նպատակը ինչպես Հայաստանում հանքարդյունաբերության զարգացման հեռանկարների քննարկումն է, այնպես էլ հայրենիքում ներդրողների թիվն ավելացնելը:

Բոլորիս լավ հայտնի է, որ այսօր թույլ զարգացած և կոռուպցիայի մեջ թաղված երկրների բնական պաշարները դիտվում են իբրև «համեղ պատառ» զարգացած երկրների համար: Համաշխարհային հանքարդյունաբերական «մեքենան» գեղեցիկ տերմինների, խոստումնալից բառերի և միջազգային չափանիշների անվան տակ շարունակում է անխնա շահագործել այդ երկրների բնական ռեսուրսները, հնարավորինս ցածր հարկեր և տուրքեր վճարելով օգտագործում է օգտակար հանածոներն ու հեռանում անդառնալի վնաս հասցնելով այդ երկրների շրջակա միջավայրին և մարդկանց առողջությանը: Ակնհայտ է, որ դա անհնար կլինի իրականացնել առանց այդ երկրների կառավարող մարմինների բարձրաստիճան պաշտոնյաների ակտիվ մասնակցության և աջակցության, որոնք «ջանք» չեն խնայում այդ պաշարների թալանն արագ և անխափան իրագործելու համար, քանզի դրանից իրենց էլ է որոշակի բաժին հասնում:

Տորոնտոյում անցկացվելիք այս ֆորումը մեզ հիշեցնում է 2014 թ. մարտի 25-26-ը Երևանում տեղի ունեցած միջազգային համաժողովը, որտեղ միջազգային բանկերն ու ֆինանսական այլ հաստատությունները, օտարերկրյա դեսպանները, տեղական ու միջազգային փորձագետները և հանքարդյունաբերական որոշ ընկերություններ հավաքվել էին՝ քննարկելու Հայաստանում սպասվող հանքարդյունաբերության հիմնական անելիքներն ու ուղենիշերը: ՀՀ կառավարության մասնակցությունն այդ համաժողովին սահմանափակվեց հիմնականում երկրորդական դեմքերով, բոլոր բարձրաստիճան պաշտոնյաները կամ ընդհանրապես ներկա չգտնվեցին երկօրյա քննարկումներին կամ սկսվելուց կարճ ժամանակ անց լքեցին այն: Հիմա էլ Կանադայում «Դանդի Փրիշս Մեթալս» ընկերությունն է կազմակերպում ֆորում, որին մասնակցելու են այդ ընկերության ղեկավարներն ու բաժնետերերը, կանադական ընկերություններ, հայ համայնքի ներկայացուցիչներ, հայ հոգևորականներ, Կանադայի աշխատանքի նախարարը, Կանադայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանն ու Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը:

«Դանդի Փրիշս Մեթալս Կապան» ընկերությունը (սահմանափակում «Դինո Գոլդ Մայնինգ») Հայաստանում շահագործում է Սյունիքի մարզում գտնվող Շահումյանի ոսկու բազմամետաղային հանքավայրը: Հետաքրքրական է, որ Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի վիճակն ու անելիքները պետք է ներկայացնի և քննարկի մի ընկերություն, որի գործունեությանը մեր հանրությունը բավական քաջատեղյակ է: Համահայկական բնապահպանական ճակատը (ՀԲՃ) 2013 թ. մայիս 13-ին hetq.am կայքում հրապարակված [հոդվածում](#) մանրամասն անդրադարձել էր ընկերության գործունեության այն հիմնական փաստերին, որոնք հակասում էին կանադական ընկերության կողմից հռչակած՝ բնությանը վնաս չհասցնելու, մարդկանց առողջությունը, կյանքն ու աշխատանքը հարգելու բարձր արժեքներին: Այդ փաստերը, հատկապես աշխատակիցների իրավունքների խախտումները, հետագայում տրված ասուլիսներից մեկի ժամանակ հաստատեց նաև ընկերության ներկայացուցիչ, փաստաբան [Սեդրակ Ասատրյանը](#): Այդ ամենից հետո ընկերությունը ոչ թե փորձեց շտկել իր խախտումներն ու հրապարակային պատասխան տալ դրանց, այլ որոշեց մանիպուլյացիա անել՝ «Դինո Գոլդ Մայնինգ» անվանումը փոխելով «Դանդի Փրիշս Մեթալս Կապանի»:

Կանադահայ գործարարներին, Սյունիքի մարզպետին և այսօր կառավարական մակարդակով Հայաստանում որոշումներ կայացնողներին ևս մեկ անգամ հիշեցնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունն ունի ընդամենը 29,7 հազար քառ. կիլոմետր տարածք, որտեղ արդեն իսկ շահագործման իրավունք ունեն մոտ 460 հանքավայր, որոնցից 26-ը մետաղական են, ևս 71 մետաղական հանքավայր էլ գտնվում է ուսումնասիրման փուլում և սպասում է շահագործման: Այս ամենի հետևանքով արդեն իսկ ունենք մի քանի հարյուր միլիոն տոննա պոչանքներով լցված 25 գործող և կոնսերվացված պոչամբարներ, որոնք հագեցած են ծանր մետաղներով և այլ վտանգավոր նյութերով: Այսպիսի տեմպերով շարունակելու պարագայում 2-3 տասնյակ տարի հետո Հայաստանի տարածքում կլինեն թունավոր ու կյանքի համար խիստ վտանգավոր հարյուրավոր պոչամբարներ, որոնք կործանարար կարող են դառնալ Հայաստան երկրի ու հայ ժողովրդի համար:

Հազարավոր հեկտար տարածքներ արդեն իսկ թաղված են հանքավայրերի մակաբացման և դատարկ ապարների տակ, իսկ հողերը հարստացած են ծանր մետաղներով և այլ վտանգավոր նյութերով: Հանուն կարճաժամկետ շահի ոչնչացվում են դարերի ընթացքում ստեղծված անտառային էկոհամակարգեր՝ ինչպես օրինակ Թեղուտի անտառը: Մակերևույթային և ստորերկրյա ջրերն աղտոտված են պոչամբարներից բաց թողնվող թափոնաջրերից, արտահոսքերից և ներծծումից, որոնք հետագայում օգտագործվելով ոռոգման և այլ նպատակներով՝ ծանր մետաղները տեղափոխում են գյուղատնտեսական մթերքների մեջ, այնտեղից էլ մարդկանց օրգանիզմ (կարող էք նայել համապատասխան գիտական հետազոտությունները): Եվ այս ամենի մոտ 90 տոկոսը տեղաբաշխված է և իրականացվում է հենց Սյունիքի մարզում՝ ընդամենը 4506 քառ. կիլոմետրի վրա:

Իհարկե, շատ հրապուրիչ է շահագործել Հայաստանի մետաղական օգտակար հանածոները, քանզի մեր պետության, այսպես կոչված, իշխանությունները ժողովրդին պատկանող հարստության օգտագործման իրավունքը ոչ միայն 100 տոկոսով տրամադրել են հիմնականում օֆշորային գոտիներում գրանցված օտարերկրյա ընկերություններին, այլ նաև ստեղծել են այնպիսի

օրենսդրական և հարկային դաշտ, որ այդ հանքարդյունաբերական ընկերություններն իրենց զգան ինչպես իրենց տանը: Մեզ և հաջորդ սերունդներին բնության կողմից շնորհված պաշարներն արդյունահանելու դիմաց սահմանված են այնպիսի վճարման ենթակա դրույքաչափեր, որոնք գրեթե չեն տարբերվում տնտեսության այլ ոլորտներում սահմանվածներից, այն դեպքում, երբ դրանք պետք է շատ ավելի մեծ լինեին:

Հայաստանում հանքարդյունաբերական ընկերություններն ամբողջությամբ ազատված են նաև պոչանքների, լցակույտերի և մակաբացման ապարների տեղադրման համար վճարներից, որոնք եթե հարկվեին նույնիսկ ամենացածր դրույքաչափերով՝ ինչպես օրինակ Էստոնիայում է, 1 տոննայի դիմաց 1.06 եվրո, ապա դրանք կկազմեին տարեկան 100 միլիոնավոր եվրո գումարներ, ինչը շատ ավելի մեծ գումար կկազմեր, քան հանքարդյունաբերական ընկերությունների կողմից ներկայումս վճարվող տարեկան բոլոր հարկերն ու այլ վճարները միասին վերցված:

Մեր Հայրենիքի շրջակա միջավայրն աղտոտելու և մարդկանց առողջությունը վտանգելու համար սահմանված են այնպիսի ցածր տուգանքներ և բնապահպանական վճարներ, որ աղտոտողին ավելի ձեռնտու է վճարել այդ չնչին գումարները, քան թե ներդնել նոր տեխնոլոգիաներ և մաքրման համակարգեր: Վերահսկողության գրեթե իսպառ բացակայության պայմաններում, այդ ընկերությունները չեն պահպանում նույնիսկ այդ օրենքներն ու իրենց տված թույլտվություններում նշված պայմանները:

Որևէ մեկը կմտաբերի^օ, թե այսօր Հայաստանում որտեղ է օգտագործվում լեռնահանքային արդյունաբերությունից ստացված հումքը: Մենք չունենք մեր հումքը վերջնական արտադրանքի վերածող ոչ մի ձեռնարկություն: Տպավորությունն այնպիսին է, որ հենց հիմա փող աշխատելու բուռն ցանկությունը կուրացրել է հայ պաշտոնյաներին, որից մեծ հոժարությամբ օգտվում են օտար պետությունները՝ Եժան գներով մեզնից ստանալով իրենց անհրաժեշտ հումքը: Դատարկ ու սին են նաև աշխատատեղեր ստեղծելու մասին հայտարարությունները, քանի որ համաձայն Հայաստանի վիճակագրական ծառայության տվյալների՝ 2011-ին Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում աշխատել է 15.500 մարդ, ինչը կազմել է երկրի ընդհանուր զբաղվածության մոտ 1%-ը, իսկ ՀՆԱ-ի աճին նպաստել է ընդամենը 3%-ով: Սրանք բոլորը անժխտելի փաստեր են: Կանադայի կառավարությանն ու ժողովրդին կարելի է հարցնել՝ արդյոք իրենք համաձայն կլինեի՞ն, որ իրենց երկրում նման պայմաններով հանքեր շահագործվեին, թե՞ ոչ...

Ստիպված ենք փաստել, որ մենք վաղուց չունենք Հայաստանի շահերը պաշտպանող կառավարման համակարգ: Այն այսօր թաղված է կոռուպցիայի մեջ, և պետության կառավարումը վերածվել է ընդամենը բիզնեսի: Ուստի, ինդիքը համակարգային է: Քանի դեռ Հայաստանում չեն կատարվել համակարգային, արմատական փոփոխություններ, մասնավորապես՝ քանի դեռ չի վերանայվել հանքարդյունաբերության և բնապահպանական ոլորտի օրենսդրական դաշտը, հարկերի և այլ վճարների դրույքաչափերը, քանի դեռ հանքարդյունաբերական ծրագրերը չունեն երկարաժամկետ պլանավորում, քանի դեռ չի իրականացվում սպասվող շահույթի ու երկարաժամկետ Էկոլոգիական վնասի գնահատում, քանի դեռ հանքերի շահագործումից ստացված գումարները չեն ծառայում Հայաստանի իրական հզորացմանը, մենք՝ որպես հայ մարդ և ՀՀ քաղաքացիներ, հայտարարում

ենք, որ ամեն քայլ ձեռնարկելու ենք այդ կործանարար գործընթացը կասեցնելու ուղղությամբ, և խստորեն դատապարտում ենք հանքարդյունաբերող ընկերությունների կողմից կազմակերպվող նմանատիպ քննարկումներն ու ֆորումները, որոնք ընդամենը ծառայում են Հայաստանի ընդերքն ավելի արագ թափով շահագործելուն:

Բոլորի ուշադրությանը ներկայացնում ենք երկու տեսաֆիլմ, որոնք ցույց են տալիս, թե ո՞վ և ինչպե՞ս է շահագործում Հայաստանի ընդերքը: Ի՞նչ բնապահպանական և առողջապահական խնդիրների է հանգեցնում հանքերի շահագործումը: Եվ, վերջապես, ի՞նչ է ստանում հայ ժողովուրդն այդ ամենից:

[«Հայաստանի կոտրվող ողնաշարը»](https://www.youtube.com/watch?v=eyRdxRT2v5Y) բնապահպանական-փաստագրական տեսաֆիլմ -

<https://www.youtube.com/watch?v=eyRdxRT2v5Y>

[«Հանքարդյունաբերությունը սպառնալիք է Սյունիքի համար»](https://www.youtube.com/watch?v=QYkGXzUahyc). ԱՐ հեռուստաընկերության

նեպրոտաժը - <https://www.youtube.com/watch?v=QYkGXzUahyc>

Համահայկական բնապահպանական ճակատ (ՀԲՃ)

Կայք՝ <http://www.armecofront.net/>

Ֆեյսբուքյան էջ՝ <https://www.facebook.com/armecofront>

ՅուԹյուբյան ավիդ՝ <http://www.youtube.com/user/armecofront>

Էլ. փոստ՝ armecofront@gmail.com

